ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԾՁԲ-18/11

ք. Երևան «24» «__05__» 2018թ.

«ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը», գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս վարչության պետ Ռ.Հովհաննիսյանի, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն ի դեմս գործադիր տնօրեն Գ.Արշակյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 148800 (մեկ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __11__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն	<<ՀՀ նախագծերի պետական
ք. Երևան, Արշակունյաց-63	արտագերատեսչական
ՔՆ աշխատակազմի գործառնական վարչություն	փորձաքննություն>> ՓԲԸ
Հ/Հ 900011019784	ք.Երևան, Հալաբյան 41 ա
ՀԿՀՀ 02204739	<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>>
	մ/ճ
	Հ/Հ 2473700277210010
	ՀԿՀՀ 01508665
Վարչության պետ՝	Գործադիր տնօրեն՝
Ռ.Հովհաննիսյան	Գ. Արշակյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 24 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1.	71351540/1	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ ՏՀ հավելվածով ներկայացրած շինարարական ծավալների նկատմամբ:	ՀՀ դրամ	148800	1	ք. Երևան, Նուբարաշենի խճուղի 2	2018թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներ

ՏՀ հավելված

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ծավալներ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը
1	*2*	*3*	*4*
	Արտաքին կոյուղու ցանց		
1	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում 8սմ հաստությամբ	մ^3	51,0
2	Խճի շերտի քանդում	մ^3	97,0
3	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում	տն	291,0

	5կմ		
4	4-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ³	190,0
5	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք /514+91/մ3	մ³	605,0
6	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	50,0
7	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով /91+16/մ3	մ³	107,0
8	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	107,0
9	Բնահողի հետ լիցք բուլդոզերով	մ³	600,0
10	Բնահողի տոփանում	մ³	707,0
11	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	190,0
12	Գույքային վահաններով խրամուղու պատերի ամրացում և քանդում / բնահող /	մ³	762,0
13	Պոլիէթիլենային ծալքավոր խողովակների տեղադրում Φ315x7.6մմ, փորձարկումով, սեղմիչ օղակներով	գմ	398,0
14	Նույնը Φ225x5.4մմ,	գմ	142,0
15	Ե/բետոնե հավաքովի էլեմենտներից կոյուղու կլոր դիտահորի պատրաստում Φ1,0մ /35հատ/	մ³	30,9
16	,,Ա,, իտահորի համար նոր ե/բ կափարիչի տեղադրում /գործող դիտահոր/	հատ	1,0
17	Դիտահորի ջրամեկուսացում 2 շերտ բիտումի քսուկով	մ²	297,0
18	Պողպատե պատյանի տեղադրում դիտահորերում D=300մմ, L=0.17մ, 71 հատ	գմ	12,1
19	Թուջե մտոց	հատ	35,0
20	Միացում գործող ցանցին տրամագիծը կապ չունի	տեղ	9,0
21	Հորի մետաղական աստիճանի տեղադրում	տն	0,105
22	Դիտահորի ամրացման մետաղական մասեր	տն	0,3
23	Մետաղական աստիճանների և ամրացնող դետալների յուղաներկում 2 շերտ	մ²	25,0
24	Խճի շերտի պատրաստում 20սմ հաստությամբ	մ²	370,0
25	Խոշորահատիիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	370,0
26	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 3սմ հաստությամբ	մ²	370,0
27	Բետոնե եզրաքարերի քանդում և վերատեղադրում բետոնե հիմքով	գմ	9,5
	Կենտրոնական մասնաշենքի ներքին կոյուղու ցանց		
1	Առկա բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 33.6մ2	մ³	5,0
2	8սմ հաստությամբ միջնապատերի քանդում 15մ2	մ³	1,2
3	d=100 մմ թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	9,0
4	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	12,0
5	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 33.6մ2, 15սմ հաստությամբ	մ³	5,0
6	10սմ հաստությամբ պ/բ միջնորմների շարվածք ամրանավորումով և բետոնացմամբ	մ²	15,0
7	Շարվածքի ամրանավորում Ac-1	տն	0,03
8	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք	մ³	84,0
9	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	92,0
10	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	153,0
11	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	41,4
12	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ³	23,0

13	Պոլիէթիլենայինծալքավոր խողովակների տեղադրում Φ150մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,0
14	Պոլիէթիլենայինծալքավոր խողովակների տեղադրում Φ100մմ, սեղմիչ օղակներով փորձարկումով	գմ	125,0
15	Պոլիէթիլենային ձևավոր մասեր /d=100-150/մմ անցում, թեքում, մաքրիչ	հատ	40,0
16	Նույնը եռաբաշխիչ /d=100x50/մմ	հատ	20,0
17	Նույնը /d=100x100/մմ	հատ	30,0
18	Ստուգիչ կանգնակի վրա	հատ	10,0
19	Միացում կոյուղագծին	տեղ	40,0
20	Էլեկտրական թուջե փական 30ч9066բ D=100մմ	հատ	10,0
21	Պ/էթիլենային կցաշուրթ D=100մմ	հատ	30,0
22	Պողպատե կցաշուրթի տեղադրում Φ100մմ	հատ	30,0
23	Պողպատե կցաշուրթավոր խլացուցիչ տվիչի համար Φ100մմ	հատ	10,0
24	Ներքին պատերի լավորակ ց/ավազե սվաղ	մ^2	22,0
25	Պատերի լավորակ լատեքսային ներկում համատարած մածկապատումով	մ^2	22,0
	N6 մասնաշենքի ներքին կոյուղու ցանց		
1	Առկա d=108x3մմ պողպատե խողովակի 2շերտ յուղաներկում	մ^2	5,0
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	13,0
3	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=100մմ	հատ	9,0
4	Պողպատե ձեւավոր մասերի տեղադրում D 100 մմ	տ	0,016
5	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0.6մ, 3 հատ	գմ	1,8
6	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	7,0
7	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	7,0
8	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ^3	0,6
9	Միացում կոյուղագծին	տեղ	11,0
10	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 1.5մ2	մ^3	0,225
11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,42
12	B-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 1.5մ2, 15սմ հաստությամբ	մ^3	0,225
13	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,0
14	Ծածկերում անցքերի բացում d=100մմ	տեղ	4,0
15	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	4,0
	Ճաշարանի մասնաշենքի ներքին կոյուղու ցանց		
1	d=100 մմ կոյուղու թուջե խողովակաշարի ապամոնտաժում	գմ	5,0
2	Կոյուղու պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում պատերի վրա Φ100մմ /փորձարկումով/	գմ	29,0
3	Պոլիվինիքլորիդե ձևավոր մասերի տեղադրում d=100մմ	հատ	13,0
4	Պողպատե պատյանի տեղադրում D=300մմ, L=0.6մ, 2հատ	գմ	1,2
5	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	8,0
6	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	8,0
7	Ավազե ենթաշերտի պատրաստում խողովակի տակ / այդ թվում վրան/	մ^3	1,6
8	Միացում կոյուղագծին	տեղ	9,0
9	Բետոնե հատակի քանդում 15սմ հաստությամբ 2մ^2	մ^3	0,3
10	Կերամիկ սալերից հատակների քանդում	մ^2	1,2

11	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 5կմ	տն	0,6
12	Բ-15 դասի բետոնից բետոնե հատակի վերականգնում 2մ2, 15սմ հաստությամբ	$մ^3$	0,3
13	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	$մ^2$	1,2
14	Բետոնե պատերում անցքերի բացում d=300մմ	տեղ	2,0
15	Ծածկերում անցքերի բացում d=100մմ	տեղ	4,0
	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ		
1	Լուսավորության վահանակ 558x350x990 32 մոդուլ	հատ	2,0
2	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 63Ա	հատ	2,0
3	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	12,0
4	ՊՊՐ 5x16մմ մալուխների անցկացում	գմ	10,0
5	ՊՊՐ 5x6մմ մալուխների անցկացում	գմ	340,0
6	Ճկախողովակ D20մմ	գմ	30,0
7	Մետաղական խողովակ D50մմ L=3մ	գմ	30,0
8	Մալուխի ամրակներ	հատ	300,0
9	Ջրահեռացման համակարգի կոմպլեկտ սարքավորում /ներառյալ ավտոմատիկայի վահանակ, կառավարման մալուխներ, 2 տվիչ/	կ-տ	10,0

* Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները սահմանվում են շինարարական աշխատանքների ավարտից հետո մեկ տարի ժամկետով:

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011019784
ՀՎՀՀ 02204739

Վարչության պետ՝
Ռ.Հովհաննիսյան

ԿԱՏԱՐՈՂ

<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
ք.Երևան, Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/հ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն՝
Գ. Արշակյան

Հավելված N 2
« 24 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	71351540/1	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ	0	0	74400	148800	148800

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019784
ՀՎՀՀ 02204739
Վարչության պետ՝
Ռ.Հովհաննիսյան

ստորագրություն
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ
ք.Երևան, Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665
Գործադիր տնօրեն՝
Գ. Արշակյան

Հավելված N 3
« 24 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 24 » « 05 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԿ-ԳՀԾՁԲ-18/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն